FRIEDRICH NAUMANN FOUNDATION For Freedom.
Հայաստան

ԼԻԲԵՐԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀԿ

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԴԵՄ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Ռուզաննա Ավագիմյան

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հրատարակող
Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի հայաստանյան գրասենյակ
Խ. Աբովյանի փ. 41, գրաս. 11
0009, Երևան, ՀՀ

Կայք - https://www.freiheit.org/south-caucasus
Facebook - https://www.facebook.com/FNFARMENIA

Հեղինակ
Ռուզաննա Ավագիմյան

Հայերենի էջադրում
Արուսյակ Օհանյան

Տառատեսակ
HayRoboto

Հրապարակման տարեթիվ
2022 թ.

Մեր օրերի ամենավտանգավոր երևույթներից մեկը միմյանց նկատմամբ թշնամության գաղափարների ազդեցության տակ գտնվող հասարակությունն է: Ողջ աշխարհում կառավարություններն օրենսդրական գործիքներով փորձում են կանխել իրենց երկրներում անհանդուրժողականության և ատելության տարածումը: Սույն աշխատությունը նվիրված է այս առնչությամբ գործող ազգային օրենսդրության վերլուծությանը և ներառում է առաջարկներ, թե ինչպես բարելավել այն՝ բաց չթողնելու համար ատելության խոսքի որևէ տարատեսակ՝ հիմնված զոհի ինքնության ցանկացած գործոնի վրա:

Սույն հրապարակումը հնարավոր է դարձել *Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի աջակցությամբ: Սույն հրապարակման մեջ տեղ գտած կարծիքների և դիրքորոշումների համընկնումը Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի հետ պարտադիր չէ:*

© Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի հայաստանյան գրասենյակ, 2022
© Լիբերալ քաղաքականության ինստիտուտ, 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ 4

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ.....12

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 18

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ 20

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Դեմոկրատական հասարակության հիմնասյուներից մեկը խոսքի ազատության իրավունքն է՝ իր բոլոր բաղադրատարրերով:

Հատկապես տեղեկատվական և կոմունիկացիոն տեխնոլոգիաների զարգացմանը համընթաց՝ որևէ մեկի կողմից արտահայտված ցանկացած միտք ակնթարթորեն հայտնվում է հանրայնորեն հասանելի հարթակում՝ համացանցում, իսկ այդ մտքի շուրջ ծավալվող քննարկումները (անկախ նրանից՝ համաձայնություն է դա, թե առարկություն), ավելացնում են դրա ընթերցումները կամ դիտումները: Ցավոք, տարածվող նյութը երբեմն ոչ թե օրենքով պաշտպանության ենթակա ազատ խոսք է, այլ ատելության դրսևորում, որի տարածումը մեծապես վնասում է հասարակությանը, խախտում առանձին անձանց կամ որոշակի խմբերի հիմնարար իրավունքները:

Հստակ սահմանագիծ իրավաչափ ազատ խոսքի և ազատ խոսքի այսպես կոչված «մուտացիաների» միջև, որոնց թվում է նաև ատելության խոսքը, գոյություն չունի. հիմնականում խնդիրը կարգավորվում է «հընթացս» նախադեպային իրավունքով: Ըստ այդմ՝ արտաքուստ կարող է թվալ, որ ատելության խոսքի դեմ պայքարելով՝ սահմանափակում ենք խոսքի ազատության իրավունքը, սակայն ատելության խոսքը չի պաշտպանվում Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա[1]) 10-րդ հոդվածով (արտահայտվելու ազատություն), ավելին՝ որոշ դեպքերում վեջին հաշվով ատելության խոսքի դեմ պայքարը պաշտպանում է անձի ազատ արտահայտվելու իրավունքն ու հնարավորությունը: Մասնավորապես՝ ատելության խոսքը հաճախ ուղղված է այլակարծության դեմ՝ հիմնովին խաթարելով հանրային դիսկուրսը կամ տարբեր կողմերի առողջ բանավեճը:

Ավելին՝ խտրական, հարձակողական տեսակի խոսքը կարող է անդառնալի հետևանքներ ունենալ՝ լարում առաջացնելով ատելության խոսքի թիրախում հայտնված անձանց դեմ, հրահրելով կամ արդարացնելով նրանց իրավունքների խախտումները, այդ թվում՝ բռնությունը: Այսինքն՝ չպետք է թերագնահատել ատելության խոսքը՝ ընդունելով այն որպես մեկ սուբյեկտի կողմից կատարված և ավարտված գործողություն: Ատելության խոսքի հետևանքները կարող են լինել չափազանց ծանր՝ թիրախավոր-

1 https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=161690

ված անձանց կամ խմբերի համար (hate speech to hate crime), ինչի ապացույցները կարող ենք գտնել տարբեր երկրների տարբեր ժամանակաշրջանների պատմությունն ուսումնասիրելով:

Մյուս կողմից, խոսքի ազատության անգամ թվացյալ, չնչին և լեգիտիմ սահմանափակումը որոշակի ռիսկեր է պարունակում իշխանության համար, քանի որ հասարակության տարբեր շերտերի մոտ այդ իրավունքի սահմանափակումը կարող է առաջացնել անվստահություն կառավարության նկատմամբ կամ տպավորություն, որ իշխանությունը ցանկանում է խուսափել քաղաքացիների կողմից որոշակի խնդիրների բարձրաձայնումից և քննարկումից[2]:

Այնինչ, ատելության խոսքի սահմանափակումն անհրաժեշտ է մի կողմից այդ նույն հասարակության բարոյաէթիկական դեգրադացիա, մյուս կողմից անձանց հիմնարար իրավունքների ոտնահարում թույլ չտալու համար: Ատելության խոսքը, ինչպես և բռնության կոչերը կամ բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը չեն կարող համարվել լեգիտիմ խոսք և, ըստ այդմ, չեն կարող պաշտպանվել մարդու իրավունքների պաշտպանությանը նվիրված միջազգային և ներպետական փաստաթղթերով (իրավական ակտերով): Այսպիսով՝ ատելության խոսքի դեմ պայքարը ոչ թե բացառում է ազատ խոսքի իրավունքը, այլ ընդհակառակը՝ խթանում լեգիտիմ ազատ խոսքով արտահայտվելու իրավունքն ու փաստացի հնարավորությունը:

Ատելության խոսքի դեմ պայքարն այնքան է կարևորվում միջազգային պրակտիկայում, որ 2019 թ. մայիսին ՄԱԿ-ն ընդունել է «Ատելության խոսքի դեմ ՄԱԿ-ի ռազմավարություն և գործողությունների ծրագիր»:

Ըստ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշի՝

«Աշխարհով մեկ մենք տեսնում ենք այլատյացության, ռասիզմի և անհանդուրժողականության անհանգստացնող հիմքեր (...): Սոցիալական մեդիան և հաղորդակցության այլ ձևերն օգտագործվում են որպես մոլեռանդության քարոզչության հարթակներ: (...) Հանրային դիսկուրսը, առանձին խմբերի քաղաքական շահերով պայմանավորված, օգտագործվում է այնպիսի սադրիչ հռետորաբանությամբ, որ խարանում և ապամարդկայնացնում է փոքրամասնություններին, միգրանտներին, փախստականներին, կանանց և ցանկացած այսպես կոչված «ուրիշի»:

---

2 Խոսքի ազատությունը կամ կարծիքի արտահայտման իրավունքը բացարձակ իրավունք չէ և որոշակի պայմաններում կարող է ենթարկվել սահմանափակումների: Խոսքի ազատության լեգիտիմ սահմանափակումների թվում կարող ենք դիտարկել արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում խոսքի ազատության անհրաժեշտ և օրինական սահմանափակումները, այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով գործող սահմանափակումները և այլն: Լեգիտիմ սահմանափակումներից մեկն ատելության խոսքի դեմ պայքարն է, ինչի մասին էլ խոսվում է սույն փաստաթղթի շրջանակներում:

(...) Ատելության խոսքը տեղափոխվում է հիմնական հոսք՝ ինչպես ազատական ժողովրդավարություն, այնպես էլ ավտորիտար համակարգեր (...):

Ատելության խոսքը սպառնալիք է ժողովրդավարական արժեքների, սոցիալական կայունության և խաղաղության համար: (...) Լռությունը կարող է ազդարարել մոլեռանդության և անհանդուրժողականության հանդեպ անտարբերություն (...):

Ատելության խոսքի դեմ պայքարը առաջնահերթություն է ՄԱԿ-ի օրակարգում՝ օգնելու համար կանխել զինված հակամարտությունները, վայրագ հանցագործությունները և ահաբեկչությունը, վերջ տալու կանանց նկատմամբ բռնությանը և մարդու իրավունքների այլ լուրջ խախտումներին, ինչպես նաև խթանելու խաղաղ, ներառական և արդար հասարակությունները:

Ատելության խոսքին անդրադարձը չի նշանակում խոսքի ազատության սահմանափակում կամ արգելում: Դա նշանակում է հետ պահել ատելության խոսքն առավել վտանգավոր երևույթի վերածվելուց (...):

(...) Իրավամբ, [ՄԱԿ]-ի ինքնությունն ու կայացումը արմատավորված են մղձավանջում, որը հետևել է, երբ կատաղի ատելությունը չափազանց երկար է մնացել է առանց հակադրվելու:»[3]:

Հայաստանում վերջին տարիների ներքաղաքական և արտաքին քաղաքական լուրջ իրադարձությունները բավականին սրել ու բևեռացրել են հասարակության տարբեր շերտերի միջև հարաբերությունները: Հասարակության անդամները, օգտվելով խոսքի ազատության և կարծիքի արտահայտման իրենց իրավունքից, հաճախ թույլ են տալիս այնպիսի էքսցեսներ (սահմանազանցումներ), որոնք ոտնձգում են այլոց ոչ նյութական իրավունքներին: Այդ էքսցեսների թվում է ատելության խոսքը, որն իր հետ արմատավորում է խտրականությունն ու անհանդուրժողականությունը:

Ստորև կքննարկվի ատելության խոսքի դեմ ներպետական մեխանիզմներ ստեղծելու իրավական հնարավորությունը:

Գործող օրենսդրությունը

Ատելության խոսքն առաջնահերթ ոտնձգում է անձի՝ խտրականությունից զերծ մնալու իրավունքին և արժանապատվությանը: Որպես հիմք վերցնելով ՀՀ Սահմանադրության (2015 թ. դեկտեմբերի 06, այսուհետ՝ Սահմանադրություն)[4] նորմերը՝ դրանք օրենքի մակարդակում ընդարձակելու պարագայում կարող ենք ունենալ ատելության խոսքի դեմ պայքարի իրավական կայուն

3 «United Nations Strategy and Plan of Action on Hate Speech» (էջ 1) https://www.un.org/en/genocideprevention/documents/UN%20Strategy%20and%20Plan%20of%20Action%20on%20Hate%20Speech%2018%20June%20SYNOPSIS.pdf

4 https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143723

գործիքակազմ, որը նաև կբավարարի ՀՀ կողմից վավերացված միջազգային փաստաթղթերի պահանջները:

Մասնավորապես, ըստ Սահմանադրության՝

Հոդված 23. Մարդու արժանապատվությունը
Մարդու արժանապատվությունն անխախտելի է:

Հոդված 29. Խտրականության արգելքը
Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Հոդված 42. Կարծիքի արտահայտման ազատությունը
1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

2. Մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է: Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային հեռուստատեսության և ռադիոյի գործունեությունը:

3. Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Հոդված 77. Հիմնական իրավունքների և ազատությունների չարաշահման արգելքը
Արգելվում է հիմնական իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով:

Նշենք, որ վերը մեջբերված սահմանադրահիրավական կարգավորումներն իրենց բնույթով նույնական են Կոնվենցիայի 8-րդ 10-րդ 14-րդ և 17-րդ հոդվածների դրույթներին: Եվ ատելության խոսքի դեմ օրենսդրության մշակման փուլում անհրաժեշտություն է համաչափորեն պաշտպանության տակ առնել ու հաշվի առնել վերը նշված իրավանորմերի պահանջներից յուրաքանչյուրը՝ մի կողմից՝ թույլ չտալու համար անձի արժանապատվության և խտրականությունից զերծ մնալու իրավունքի խախտումներ, մյուս կողմից՝ անտեղի չսահմանափակելով լեգիտիմ խոսքի, կարծիքի արտահայտման իրավունքը, միաժամանակ՝ հաշվի առնելով հիմնական իրավունքների և ազատությունների չարաշահման արգելքի տարրերը:

Սահմանադրի կողմից որևէ իրավունքի հռչակումը կարող է մնալ հռչակագրային բնույթի նորմ, եթե այդ իրավունքի խախտման իրավական հետևանքներ չեն նախատեսվում օրենսդրական մակարդակում: Ըստ այդմ, գալով ատելության խոսքի բնագավառում քրեական օրենսդրության կարգավորումներին (2022 թ. հուլիսի 01-ից ուժի մեջ է մտել ՀՀ նոր քրեական օրենսգիրքը՝ ՀՕ-199-Ն[5]), պետք է արձանագրենք.

ա) Համաձայն 71-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ հանցանքը ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով կատարելը համարվում է քրեական պատասխանատվությունը կամ պատիժը ծանրացնող հանգամանք:

բ) 136-րդ հոդվածով պատիժ է նախատեսվում ցեղասպանությունը կամ մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունները հրապարակայնորեն հերքելու, արդարացնելու, դրանք քարոզելու կամ դրանց վտանգավորությունը նսեմացնելու համար, եթե դա կատարվել է ռասայական պատկանելության, մաշկի գույնի, ազգային կամ էթնիկ ծագման կամ կրոնական պատկանելության հիման վրա՝ անձի կամ անձանց խմբի նկատմամբ ատելություն, խտրականություն կամ բռնություն հրահրելու նպատակով: Ընդ որում՝ տվյալ հանցակազմը որակյալ դարձնող հանգամանքներն են արարքի կատարումը հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով, զանգվածային լրատվության միջոցներով կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով կամ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:

գ) Մի շարք հանցագործությունների համար (սպանություն (155), առողջությանը ծանր վնաս պատճառելը (166), առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը (167), մարդուն առևանգելը (191), ազա-

5 https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=165138

տությունից ապօրինի զրկելը (192), հոգեկան ներգործությունը (194), ֆիզիկական ներգործությունը (195), ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը (196), գույքը ոչնչացնելը կամ վնասելը (264), դիակն անարգանքի ենթարկելը (305), գերեզմանն անարգանքի ենթարկելը (306)) ևս առանձին ծանրացնող հանգամանք է դիտարկվում հանցանքը ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով կատարելը:

դ) Նոր քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի կարգավորմամբ՝ քրեորեն պատժելի է անձի կամ անձանց խմբի նկատմամբ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը, ինչպես նաև այդ նպատակով նյութ կամ առարկա տարածելը; իսկ 330-րդ հոդվածով պատիժ է նախատեսվում անձի կամ անձանց խմբի նկատմամբ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչի, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու, ինչպես նաև այդ նպատակով նյութ կամ առարկա տարածելու համար (...); նշյալ երկու հանցակազմերը որակյալ են, երբ կատարվում են՝ (1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, (2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ (3) հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործությունների, զանգվածային լրատվության միջոցների կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ):

Ինչպես ՀՀ նախկին քրեական օրենսգրքի (2003 թ. ապրիլի 18, ՀՕ-528-Ն[6]) 226.2-րդ հոդվածը (լրացումը կատարվել է 2020 թ. ապրիլի 15-ին, ՀՕ-231-Ն[7]), այնպես էլ նոր օրենսգրքի 330-րդ հոդվածը կենտրոնանում է բռնության կոչերի վրա, ինչն իհարկե խորապես նվազեցնում էր ատելության խոսքի դեմ պայքարի հնարավորությունները (բացը միայն որոշակիորեն կարող էր լրացնել 226-րդ հոդվածը (ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն, ռասայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողությունները)), սակայն

6 https://www.arlis.am/documentview.aspx?docid=159328

7 https://www.arlis.am/documentview.aspx?docid=141919

նոր օրենսգրքի 329-րդ հոդվածը մեկ քայլ առաջ կարող ենք համարել, քանի որ այն ընդլայնում է ատելության խոսքի դեմ պայքարի ներպետական օրենսդրական գործիքները՝ քրեականացնելով նաև ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը, ինչպես նաև այդ նպատակով նյութ կամ առարկա տարածելը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքն (1985 թ. դեկտեմբերի 068) ատելության խոսքի հետ կապված կարգավորումներ չի պարունակում:

Գալով մասնավոր իրավունքին՝ պետք է նշենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսդրության մեջ դեռևս բացակայում է ատելության խոսքի վերաբերյալ որևէ իրավակարգավորում: Թեև ՀՀ քաղաքացիական օրենսգրքում (1998 թ. մայիսի 05, ՀՕ-239[9]) սահմանված են վիրավորանքի և զրպարտության վերաբերյալ նորմեր (1087.1-ին հոդված, լրացումը կատարվել է 2010 թ. մայիսի 18-ին, ՀՕ-97-Ն[10]), դրանք ուղղակիորեն չեն ներառում ատելության խոսքը: Այսինքն՝ նույնիսկ երբ քաղաքացիական բնույթի վեճը ներառում է ատելության խոսք, դատարան ներկայացվող հայցապահանջը ձևակերպվում է վիրավորանքի կամ զրպարտության հիմքերով[11]:

Ընդ որում՝ օրենքով նախատեսվում է խիստ սահմանափակ հայցային վաղեմության հատուկ ժամկետ՝ վիրավորանքի կամ զրպարտության մասին անձին հայտնի դառնալու պահից հետո՝ 1 ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան վիրավորանքի կամ զրպարտության պահից 6 ամսվա ընթացքում; սահմանափակ է նաև ոչ նյութական վնասի հատուցում պահանջելու հնարավորությունը (նոր կարգավորմամբ շեմը բարձրացվել է. վիրավորանքի դեպքում՝ մինչև 3 (նախկին՝ 1), իսկ զրպարտության դեպքում՝ մինչև 6 (նախկին՝ 2) մլն ՀՀ դրամ՝ չնայած նրան, որ անգամ նախկին՝ ցածր առավելագույն շեմի պարագայում դատարանները շատ հաճախ խուսափում էին բավարարել հայցապահանջներն այդ մասով՝ շեմի անգամ 50%-ի չափով[12]):

---

8 https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=167042

9 https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=165457

10 https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=58945

11 https://rm.coe.int/final-report-on-reforming-armenian-hate-speech-laws-arm/pdf/1680a0b84d
«Արդարադատության մատչելիության խթանում Արևելյան գործընկերության երկրներում խտրականության, ատելության հանցագործությունների և ատելության խոսքի զոհերի համար՝ արտադատական կարգով փոխհատուցման մեխանիզմների միջոցով» ծրագիր
Համեմատական ուսումնասիրություն՝ ատելության խոսքի օրենքների և ՀՀ օրենսդրության վերաբերյալ
(2.3-րդ կետ), Չարա Բակալիս, Արա Ղազարյան, 2020 թ. սեպտեմբեր

12 Աղբյուր՝ ՀՀ դատական տեղեկատվական համակարգ http://datalex.am/

Բաց է մնում այն լրատվականների կամ ատելության խոսքը տարածող, այդ խոսքի լսարանը բազմապատկող այլ սուբյեկտների պատասխանատվության հարցը, որին որևէ կերպ ՀՀ օրենսդրությունը չի անդրադառնում, բացի «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով (2003 թ. դեկտեմբերի 13, ՀՕ-14-Ն[13]) նախատեսվող հերքման և պատասխանի իրավունքից, որը կիրառելի է իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն, զրպարտություն տարածելու դեպքում (8-րդ հոդված), միաժամանակ, եթե վիրավորանքը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, հնարավոր է պահանջել լրատվության նույն միջոցով լրիվ կամ մասնակի հրապարակել դատարանի վճիռը:

Սակայն նույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի ուժով՝ լրատվական գործունեություն իրականացնողն ազատվում է տվյալ տեղեկատվության տարածման համար պատասխանատվությունից, եթե դա հրապարակային ելույթի հրապարակման, պետական մարմինների պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի կամ հեղինակային որևէ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն է, և դա տարածելիս ինքը կատարել է հղում այդ աղբյուրին: Այսինքն՝ եթե լրատվականը բառացի մեջբերում է որևէ սուբյեկտի կողմից արտահայտված ատելության խոսքը՝ հղում անելով հեղինակին, ապա տվյալ լրատվականի պատասխանատվության հարց չի կարող առաջանալ:

13 https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164454

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

Ատելության խոսքի դեմ անհրաժեշտ է մշակել քաղաքականություն՝ իրավական արդյունավետ գործիքակազմի ստեղծմամբ՝ հավասարակշռելով Կոնվենցիայի 8-րդ, 10-րդ, 14-րդ և 17-րդ կամ ՀՀ Սահմանադրության 23-րդ, 29-րդ, 42-րդ և 77-րդ հոդվածներով նախատեսված հիմնարար իրավունքները:

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Տարբերակները հետևյալն են.

- **կա՛մ որևէ փոփոխության չենթարկել գործող օրենսդրությունը՝ դրա հետագա զարգացումը թողնելով դատական պրակտիկային,**
- **կա՛մ կատարել որոշակի փոփոխություններ և լրացումներ գործող օրենսդրական ակտերում՝ հաշվի առնելով միջազգային վավերացված փաստաթղթերն ու փորձը,**
- **ընդ որում՝ հնարավոր են փոփոխություններ ՀՀ քրեական նոր օրենսգրքում, լրացումներ վարչական իրավախախտումների վերաբերյալ և քաղաքացիական օրենսգրքերում՝ առանձին-առանձին կամ մեկ միասնական օրենսդրական փաթեթի տեսքով. հաշվի առնելով այդ փոփոխությունների և լրացումների միասնական առարկան և խնդիրը (պայքար ատելության խոսքի դեմ)՝ առաջարկվում է փաթեթային կամ համակարգային լուծման տարբերակը:**

Այսպիսով, առկա օրենսդրական կարգավորումներն անհրաժեշտ է հստակեցնել և ընդլայնել՝ ի ապահովումն Սահմանադրությամբ և Կոնվենցիայով ամրագրված հիմնարար իրավունքների

պաշտպանության: Ըստ այդմ՝ առաջարկում ենք ներքոհիշյալ համալիր իրավակարգավորումները:

Առաջին, քրեաիրավական կարգավորումների մասով՝
Նախևառաջ, ներպետական օրենսդրության մեջ ցանկացած տեսակի կարգավորումն անհրաժեշտ է սկսել ատելության խոսքի ընդգրկուն սահմանումից՝ իրավական որոշակիությունն ապահովելու և դրանով նաև օրենքի հայեցողական կիրառության հնարավորությունը բացառելու նպատակներով:

Անդրադառնալով միջազգային իրավական փաստաթղթերին, անհրաժեշտ է նշել, որ ատելության խոսքի միասնական սահմանում գոյություն չունի, սակայն որպես ընդհանրական մոտեցում կիրառելի կարող է լինել «Ատելության խոսքի դեմ ՄԱԿ-ի ռազմավարության և գործողությունների ծրագրի» մեջ տրվող բնորոշումը: Մասնավորապես, ըստ դրա՝ *ատելության խոսքը բանավոր կամ գրավոր խոսքի կամ վարքագծի ցանկացած տեսակի հաղորդագրություն է, որը հարձակվում է կամ օգտագործում վիրավորական կամ խտրական լեզու՝ հղում անելով անձին կամ խմբին՝ ելնելով նրանց ինքնությունից, այլ կերպ ասած՝ կապված նրանց կրոնի, էթնիկ պատկանելության, ազգության, ռասայի, գույնի, ծագման, սեռի կամ նրանց ինքնության այլ գործոնի հետ*[14]:

Ըստ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 1997 թ. հոկտեմբերի 30-ի «Ատելության խոսքի վերաբերյալ» No. R (97) 20 հանձնարարականի՝ *ատելության խոսքն ընդգրկում է արտահայտման բոլոր ձևերը, որոնք տարածում, հրահրում, խթանում կամ արդարացնում են ռասայական ատելությունը, այլատյացությունը, հակասեմականությունը կամ անհանդուրժողականության վրա հիմնված ատելության այլ ձևերը, ներառյալ՝ ագրեսիվ ազգայնականությամբ և էթնոցենտրիզմով արտահայտված անհանդուրժողականությունը, փոքրամասնությունների, ներգաղթյալների և ներգաղթյալ ծագում ունեցող անձանց նկատմամբ խտրականությունն ու թշնամանքը*[15]:

Այսպիսով, ատելության խոսքը խտրական, վիրավորական, հարձակողական խոսք է, որն ուղղված է որևէ անձի կամ անձանց խմբի դեմ՝ կապված նրանց ինքնության որևէ գործոնի հետ: Ընդ որում, ինչպես և ցանկացած տեսակի հաղորդագրություն կամ ուղերձ (message), ատելության խոսքը ևս կարող է արտահայտվել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր կամ ժեստերի, պատկերների, որոշակի վարքագծի (օրինակ՝ ֆլեշմոբ) և այլ ձևերով: Ըստ այդմ՝ օրենքով անհրաժեշտ է որևէ կերպ չսահմանափակել ատելության խոսքի արտահայտման ձևերը:

---

14 «United Nations Strategy and Plan of Action on Hate Speech» (էջ 2) https://www.un.org/en/genocideprevention/documents/UN%20Strategy%20and%20Plan%20of%20Action%20on%20Hate%20Speech%2018%20June%20SYNOPSIS.pdf

15 RECOMMENDATION No. R(97) 20 OF THE COMMITTEE OF MINISTERS TO MEMBER STATES ON HATE SPEECH Adopted by the Committee of Ministers on 30 Oct. 1997 at the 607th meeting of the Ministers' Deputies (էջ 2), https://rm.coe.int/1680505d5b

Նույնկերպ, անհրաժեշտ է չսահմանափակել ինքնության այն տարրերը, որոնց հիման վրա անձը կամ անձանց խումբը թիրախավորվում է ատելության խոսքով:

Մյուս կողմից, ներկայացված բնորոշումներից ակնհայտ է նաև, որ ատելության խոսքը կարող է պարունակել կամ չպարունակել բռնության կոչեր (նույնկերպ՝ արդարացնել կամ հրահրել բռնությունը), լինել հարձակողական կամ չլինել հարձակողական, սակայն այն մշտապես կրում է խտրական բնույթ՝ կապված անձի կամ անձանց խմբի ինքնության որևէ գործոնի հետ:

Ատելության խոսքի մյուս հատկանիշը դրա հրապարակայնությունն է (օբյեկտիվ կողմի պարտադիր տարր), ինչպես նաև դիտավորությամբ (չարամտությամբ) կատարված լինելը (սուբյեկտիվ կողմը):

Ի վերջո, հանցագործության սուբյեկտն ընդհանուր է, սակայն հնարավոր է նախատեսել հանցանքը որոշակի հատուկ սուբյեկտի կողմից կատարվելը՝ որպես արարքը որակյալ դարձնող հանգամանք, ինչպես օրինակ՝ ՀՀ նոր քրեական օրենսգրքի 329-րդ և 330-րդ հոդվածների 2-րդ մասերի 2-րդ կետերում:

Ուսումնասիրելով ՀՀ նոր քրեական օրենսգրքի 329-րդ և 330-րդ հոդվածները վերը նշված կետերի լույսի ներքո՝ անհրաժեշտ ենք համարում նշել հետևյալը՝

329-րդ և 330-րդ հոդվածները թվարկում, սակայն չեն սահմանափակում տուժողի ինքնության գործոնները, ինչը բնականաբար ողջունելի է, սակայն 329-րդ հոդվածում օգտագործված են «հրապարակային խոսքը, ինչպես նաև (...) նյութ կամ առարկա տարածելը» եզրերը, իսկ 330-րդ հոդվածում օգտագործված են «բռնություն գործադրելու հրապարակային կոչը, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը, ինչպես նաև (...) նյութ կամ առարկա տարածելը» եզրերը: Սրանով անհարկի սահմանափակվում են օբյեկտիվ կողմից արարքի դրսևորման ձևերը, քանի որ, ինչպես արդեն նշվել է, ատելության խոսքը կարող է դրսևորվել բազմաթիվ եղանակներով (բանավոր, գրավոր խոսք, ժեստ, պատկեր, որոշակի վարքագիծ՝ գործողություն կամ անգործություն և այլն), ըստ այդմ՝ առաջարկում ենք թվարկումը թողնել բաց կամ կիրառել «արտահայտման բոլոր ձևերը» բառակապակցությունը:

Անհրաժեշտ ենք համարում նաև կենտրոնանալ ատելության խոսքով հասցվող վնասի վրա. ծանրացնող հանգամանքների շարքում օրենսդիրը չի նախատեսել ծանր հետևանքներ առաջացնելու փաստը, մինչդեռ, ինչպես արդեն նշվել է, ատելության խոսքը կարող է ունենալ կանխատեսելի և անկանխատեսելի ծանր հետևանքներ (hate speech to hate crime), ինչն էլ առաջարկում ենք լրացնել վերը նշված հոդվածների 2-րդ մասերում կամ նախատեսել 3-րդ մաս՝ ազատազրկման ավելի երկար ժամկետով:

Երկրորդ, քաղաքացիաիրավական կարգավորումների մասով՝

Ատելության խոսքը, ի տարբերություն վիրավորանքի և զրպարտության, ոտնձգում է ոչ միայն անձի պատվին, արժանապատվությանը, գործարար համբավին, այլ նաև և առաջնահերթ խտրականությունից զերծ մնալու իրավունքին: Ըստ այդմ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում (մասնավորապես՝ դելիկտային պարտավորությունների գլխում, ինչպես նաև դրա հետ փոխկապակցված դրույթներում) անհրաժեշտ է նախատեսել նոր կարգավորումներ, որոնց հիման վրա անձը կամ անձանց խումբը, որը թիրախավորվել է ատելության խոսքով, հնարավորություն կունենա պահանջելու և ստանալու պատճառված ոչ նյութական վնասի հատուցում՝ առանց անհարկի կարճ հայցային վաղեմության ժամկետներ սահմանելու, միաժամանակ՝ հնարավորություն տալով դատական ակտով սահմանելու, թե որքան է կազմելու փոխհատուցման չափը, այսինքն՝ չսահմանելով վնասի հատուցման առավելագույն սահմանաչափ:

Այստեղ նաև անհրաժեշտ կլինի նախատեսել անցումային դրույթ, որը կսահմանի, որ նոր կարգավորումների ուժի մեջ մտնելու պահի դրությամբ արդեն իսկ հարուցված, վարույթ ընդունված և քննվող հայցերը շարունակում են քննվել հայցն ընդհանուր իրավասության դատարան ներկայացվելու պահին գործող օրենքով (օրենսգրքի 1087.1-ին հոդված), այսինքն՝ նոր կարգավորումը հետադարձ ուժ չի ունենա և ուժի մեջ կմտնի, օրինակ, դրա պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը[16]:

Սակայն միայն մասնավոր տիրույթում հարցը կարգավորելով՝ պետությունը միայնակ է թողնում թիրախավորված անձանց՝ ընդդեմ ատելության խոսքի. հեղինակը կարող է կիրառել այնպիսի մեթոդներ, որոնք նրան կքողարկեն՝ հասարակ քաղաքացու համար անհասանելի դարձնելով նրա իրական անունը, հասցեն կամ այլ հանգամանքներ, որոնք անհրաժեշտ է ընդհանուր իրավասության դատարան քաղաքացիական գործով հայց ներկայացնելու համար: Օրինակ, հեղինակը հանդես է գալիս ոչ իր անվան տակ (այսպես՝ ֆեյք անուն (fake name) կամ ֆեյք էջ (fake page) օգտագործելով), օգտագործում է այնպիսի կապի տարբերակ (VPN connection), որը թույլ չի տալիս ֆիքսել իրական IP-հասցեն և այլն: Ըստ այդմ՝ քրեաիրավական և վարչաիրավական ներգործությունն ատելության խոսքի դեմ պայքարի ոչ պատրանքային, գործուն մեթոդներ ապահովելու նպատակով պարտադիր է:

Ընդ որում՝ ՀՀ Սահմանադրական դատարանն արդեն իսկ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ նման դեպքերը չեն կարող դիտարկվել կրկին դատվելու արգելքի համատեքստում: Մասնավորապես, ըստ Սահմանադրական դատարանի՝ *«(...) քաղաքացիական և քրեական*

16 Օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետների հետ կապված մանրամասները՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդված, հետադարձ ուժ տալու հետ կապված մանրամասները՝ նույն օրենքի 28-րդ հոդված
2018 թ. մարտի 21, ՀՕ-180-Ն https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152139

օրենսդրությունները հետապնդում են տարբեր նպատակներ, և դրանց իրացման համար նախատեսված են տարբեր ընթացակարգեր: (...) եթե առաջին դեպքում օրենսդիրը նպատակ է հետապնդում մասնավոր իրավահարաբերությունների շրջանակներում ապահովել անձի խախտված իրավունքների վերականգնման իրավական հնարավորությունը և ստանալ ոչ նյութական վնասի հատուցում, ապա երկրորդ դեպքում օրենսդրի խնդիրն է կանխել իրավունքների հնարավոր ցանկացած խախտում, իսկ խախտման դեպքում հանրային իրավահարաբերությունների շրջանակներում պաշտպանել դրանք: Վերոշարադրյալի հիման վրա Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ քրեաիրավական պատասխանատվությունն իր բնույթով պատժիչ տեսակի պատասխանատվության միջոց է՝ ի տարբերություն քաղաքացիաիրավական պատասխանատվության, որն ունի իրավավերականգնիչ առաքելություն: Ավելին, բացի նրանից, որ տարբեր են ՀՀ քաղաքացիական և ՀՀ քրեական օրենսգրքերի նպատակները և խնդիրները (...) Բացի դրանից, քաղաքացիաիրավական պատասխանատվության դեպքում փոխհատուցման ենթակա գումարը տրվում է անձին, որին հասցվել է վիրավորանքը, իսկ քրեաիրավական պատասխանատվություն կիրառվելու դեպքում համապատասխան տուգանքը փոխանցվում է պետությանը: Վերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ քաղաքացիական պատասխանատվության սահմանումն ինքնին չի բացառում քրեորեն պատժելի արարքի համար պատասխանատվության սահմանումը, և հակառակը, որպիսի պայմաններում վիճարկվող կարգավորումը Սահմանադրության համատեքստում խնդրահարույց չէ: (...)»[17]:

Երրորդ, վարչաիրավական կարգավորումների մասով՝

Առաջարկում ենք նախատեսել վարչական պատասխանատվություն (տուգանքի տեսքով) զանգվածային լրատվության այն միջոցների համար, որոնք տարածում են այլ սուբյեկտի արտահայտած ատելության խոսքը: Ընդ որում՝ այստեղ օրենսդիրը կարող է ընդլայնել հատուկ սուբյեկտների շրջանակը՝ ընդգրկելով ոչ միայն լրատվականներին, այլ նաև բլոգերներին, որոնք հաճախ ունեն ավելի մեծ լսարան և ազդեցություն, քան բազմաթիվ լրատվական կայքեր, օրաթերթեր, լրատվության այլ միջոցներ:

Այսինքն, այստեղ պետք է տարբերակել, թե արդյո՞ք լրատվականի կողմից հրապարակված նյութը հեղինակային է կամ դրանում հղում է կատարվում անանուն աղբյուրի կամ նշվում է աղբյուրը և հրապարակվում այն.

ա) Եթե նյութը հեղինակային է, ապա հեղինակը ենթակա է պատասխանատվության քրեական օրենսգրքով սահմանված կարգով:

17 ՍԴՈ-1646, 2022 թ. ապրիլի 22 (5.5-րդ կետ)
https://concourt.am/decision/decisions/6270ce9d96be2_sdv-1646.pdf

բ) Եթե հղում է կատարվում անանուն աղբյուրի և լրատվականը չի բացահայտում այդ աղբյուրը, ապա պետք է գործի նույն կարգավորումը, ինչ հեղինակային նյութի հրապարակման դեպքում:

գ) Եթե հղում է կատարվում և նշվում է հրապարակված նյութի հեղինակը, ապա այս դեպքում լրատվական գործունեություն իրականացնող սուբյեկտի նկատմամբ կիրառելի կլինի առաջարկվող վարչահիրավական կարգավորումը:

Ընդ որում՝ հնարավոր է նախատեսել նաև պատժից և պատասխանատվությունից ազատվելու հնարավորություն միևնույն հոդվածի վերջին մասում: Մասնավորապես, այստեղ կարող է կիրառելի լինել «ծանուցում և հեռացում» (notice and take down) ընթացակարգը, որը ենթադրում է, որ լրատվականը, ունենալով ակտիվ մոդերացիայի հնարավորություն, պետք է հեռացնի իր կողմից հրապարակված որևէ նյութ, եթե նրան ծանուցել են այն մասին, որ այդ նյութը պարունակում է ատելության խոսք (օրինակ՝ գերմանական «NetzDG» օրենքով (Network Enforcement Act կամ «hate speech law»[18], գործում է 2018 թ. հունվարի 01-ից)՝ համացանցային խոշոր լրատվականները և այլ կայքերը կարող են ենթարկվել մեծ տուգանքների, եթե ծանուցվելուց հետո բավականաչափ արագ չեն հեռացնում իրենց հարթակներում հրապարակված ատելության խոսքը):

Նույն ընթացակարգը հնարավոր է կիրառել նաև ատելության խոսք պարունակող մեկնաբանությունների նկատմամբ: Եվ այստեղ հիշատակման է արժանի Դելֆիի գործը[19]: Մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ազատ արտահայտվելու իրավունքի խախտում չէր արձանագրել, երբ Էստոնիայի իշխանությունը պատասխանատվության էր ենթարկել ընկերությանն իր հարթակում գեներացված ատելության խոսքի համար: Ընկերությունը չի եղել ատելության խոսքի հեղինակը, սակայն չի հեռացրել նշված բովանդակությունն իր հարթակից, երբ ակնհայտորեն տեղյակ է եղել կամ չէր կարող տեղյակ չլինել դրա առկայության վերաբերյալ. կիրառված միջոցը համարվել է համաչափ (տուգանքը չի խոչընդոտել լրատվամիջոցի տեղեկություններ ու գաղափարներ տարածելու իրավունքին):

---

18 An Analysis of Germany's NetzDG Law, Transatlantic Working Group (2019 թ. ապրիլի 15) https://www.ivir.nl/publicaties/download/NetzDG_Tworek_Leerssen_April_2019.pdf

19 Դելֆին ընդդեմ Էստոնիայի (No. 64569/09, 2015 թ. հունիսի 16) https://hudoc.echr.coe.int eng#{%22appno%22:[%2264569/09%22], %22itemid%22: [%22001-155105%22]}

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անհրաժեշտ է հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ՝ օրենքների նախագծերի փաթեթում ընդգրկելով փոփոխություններ և լրացումներ ՀՀ քրեական, քաղաքացիական և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերում, «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքում և դրանց հետ փոխկապակցված այլ իրավական ակտերում՝ հաշվի առնելով վերը ներկայացված առաջարկությունները:

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Ռուզաննա Ավագիմյանը ծնվել է 1988 թ. Երևանում:

2011 թ. գերազանցությամբ ավարտել է Հայաստանում ֆրանսիական համալսարանի Միջազգային գործարար իրավունքի մագիստրոսական դասընթացը, 2016 թ.՝ ՀՀ փաստաբանական դպրոցը՝ քաղաքացիական և վարչական ուղղվածությամբ:

Դիպլոմային պրակտիկաներ է անցել ֆրանսիական բանկում, ՀՀ պաշտպանության նախարարության պաշտպանական քաղաքականության վարչությունում:

Աշխատել է դատական համակարգում, այնուհետև Ազգային Ժողովում՝ գլխավորապես օրենսդրական նախաձեռնությունների մշակման ուղղությամբ, ինչպես նաև կազմել առաջարկներ՝ խորհրդարան բերված կարևորագույն նախագծերի շուրջ:

Փաստաբանական գործունեության շրջանակներում, ի թիվս այլնի, զբաղվում է ապատեղեկատվության հերքման, զրպարտության, վիրավորանքի հայցերով:

2019 թ. նաև Լիբերալ քաղաքականության ինստիտուտի փոխնախագահն է, 2021-ից՝ Ռազմավարական դատավարությունների կենտրոնի խորհրդի անդամ:

2021 թ. հեղինակել է 2020 թ. 44-օրյա պատերազմի հետ կապված՝ Ադրբեջանի կողմից իրագործված պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ զեկույց:

Publisher
Friedrich Naumann Foundation for Freedom Armenia
Kh. Abovyan Street 41, office 11
0009 Yerevan
Armenia

Website: https://www.freiheit.org/south-caucasus
Facebook: https://www.facebook.com/FNFARMENIA

Author
Ruzanna Avagimyan

Armenian layout
Arusyak Ohanyan

Typeface
HayRoboto

Contact
Email: armen.grigoryan@freiheit.org, lusine.martirosyan@freiheit.org

Year of publication
2022

Recommendation for Policy Design Against Hate Speech
One of the most dangerous things in our days is a society under the influence of the ideas of hostility against each other. Governments all over the world are trying to prevent the diffusion of intolerance and hate in their countries with legislative tools. This work is dedicated to the analysis of the current national legislation in this regard and comprises proposals on how to improve it in order to cover all kinds of hate speech based on any factor of the victims' identity.

Note about the publication
The publication of this report is made possible by the support of Friedrich Naumann Foundation for Freedom South Caucasus. The views and opinions expressed in this publication do not necessary reflect the position of the Friedrich Naumann Foundation for Freedom and its employees.

FRIEDRICH NAUMANN FOUNDATION For Freedom.

Հայաստան

Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի
հայաստանյան գրասենյակ
Խ. Աբովյանի փ. 41, գրաս. 11, 0009, Երևան, ՀՀ
Էլ. փոստ՝ Armen.Grigoryan@Freiheit.org; Lousin.Martirossian@Freiheit.org